Այսքանս զոր ծրիցի, խաղալիկ անմտութեանս, յըսկիզբն տարուս մինչ ի կատարած տարոյս, և տեսողացդ զայս զիս կատակելոյ. ողջ լիջիք ի Տէր սըրբութեամբ։

Թվին Հայոց ՌՃ և Դ-ին եղև Զատիկ և Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և Ապրիլի ԺԵ-ն։

Այգուցս (16 Ապրիլ), որ Մեռելոց ասի, Առաջնորդն ոչ եթող գնալ ի գերեզմաներն վասն վէգիրին՝ թէ չլինի զայցէ անդ և զմեզ նեղեալ գտանեսցէ. և մեք գնացաք ի Ղալաթիայ գերեզմաներն հանդերձ հարբս և Մղտեսիւն. և յետ աւրհնելոյն զգերեզմանս, առեալ տարան զմեզ որդիք Մահտեսի Կիրակոսին մեր ի տունս իւրեանց։ Եւ Մահտեսի Կիրակոսն յԵրուսաղէմ էր ի տարիս ընտանեօքն, և որ մեզ հետ գնաց՝ ոչ էր ընտանեօք։ Անդ նստաք պատուով մինչև իրիկունս. և ելեալ Տէրտէրս և Մղտեսին գնացին ի վայրն ի մօտ Եղիազար վարդապետն որ կայր ի ժամն, և ես կացեալ անդ ևս՝ ես այլ եկի ի տուն։

Գշի (17 Ապրիլ) երեկոյիս, որ ի ժամն կանգնեալ կայաք, ամպն եկ գոռալով և տեղեաց կարկուտ ի չափ Բ և Գ տրամի և էանց։ Եւ օրս Բուրդ Աստուածատրին քուրն ուրացաւ զՔրիստոս վասն բոզութեան, որ լեալ ի մի տուն տաճկի դրացին՝ զվերջն յայս փոխեաց։ Գիշերս լուսոյ զէմ շարժ եղև։

Եշի օրս (19 Ապրիլ) ելեալ Վարդապետն ի Ղալաթու գնաց ի Պրուսայ։

ԻԲ-ին Նոր Կիրակի Բ. Աստուածատուրին հետ կռվեցաք վասն աջահամբուրի Տէր Ղազարին, որ ես առեալ էի և նոքա եկին թէ Մեք կ'առնեմք։ Եւ յետ հացին ելաք ընդ Մղտեսուն ի գերեզմաներն գնացաք և անտի ի Մղտեսի Եաղուպենցն մեր, և ես Բշի (23